

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1.Ձբաղվածություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2004թ. հունվար-նոյեմբերին, ըստ գնահատման, կազմել է 1227.2 հազ. մարդ, որի 90.6%-ը կամ 1111.9 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.4%-ը կամ 115.3 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, և գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2004թ. նոյեմբերի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 144.0 հազ. աշխատանք փնտրողներից 97.0%-ը կամ 139.7 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 78.5%-ը կամ 109.6 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 7.3 հազ.մարդ, նրանցից՝ կանայք՝ 53.8%:

2004թ. նոյեմբեր ամսին «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում գրանցված 0.9 հազ. չզբաղվածներից 0.5 հազարը կամ 55.6%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.2 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.6 հազարը կամ 27.3%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության միջնորդությամբ նախկինում աշխատանք փնտրող 619 աշխատանքի տեղավորվածներից 54.0%-ը եղել են կանայք:

**Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի<sup>1</sup>, 2004թ. նոյեմբերի վերջին**

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ չզբաղվածներ		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2003թ. նոյեմբերի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. նոյեմբերի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
ք.երևան	29.8	86.4	29.5	86.0	25.7	84.0
Արագածոտն	2.4	104.3	2.0	95.2	1.3	92.9
Արարատ	5.1	91.1	4.8	88.9	3.6	85.7
Արմավիր	8.1	98.8	7.9	96.3	5.0	92.6
Գեղարքունիք	8.2	96.5	7.6	91.6	5.1	83.6
Լոռի	27.7	102.6	27.2	101.5	21.6	99.1
Կոտայք	7.4	92.5	7.2	91.1	5.1	86.4
Շիրակ	31.5	100.3	30.8	98.4	24.5	95.3
Սյունիք	16.1	95.3	15.7	93.5	12.8	92.8
Վայոց ձոր	2.3	109.5	2.1	100.0	1.6	100.0
Տավուշ	5.4	103.8	4.9	100.0	3.3	94.3
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>144.0</b>	<b>96.2</b>	<b>139.7</b>	<b>94.3</b>	<b>109.6</b>	<b>91.3</b>

Պաշտոնապես գրանցված գործազուրկներից՝ 77.0 հազ. մարդ կամ 70.3%-ը կազմել են կանայք: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2003թ. նոյեմբերի նկատմամբ աճել է 1.8%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2004թ. նոյեմբերի վերջին կազմել է 560 մարդ, այդ թվում՝ 75.5%-ը կամ 423-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

**Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների, 2004թ. նոյեմբերին<sup>1</sup>**

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	որից՝ ամսվա վերջի դրությամբ
<b>Ազատ աշխատատեղեր</b>	812	560
<b>Ծառայողներ, ընդամենը</b>	173	137
<i>նրանցից՝</i>		
տնտեսագետ	5	2
ինժեներ	5	4
բժիշկ	27	27
մանկավարժ	16	13
իրավաբան	-	-
գյուղատնտես	-	-
այլ մասնագետներ	120	91
<b>Բանվորներ, ընդամենը</b>	639	423
<i>նրանցից՝</i>		
խառատ	14	7
փականագործ	21	13
մեխանիկ	11	11
էլեկտրիկ	3	2
ատաղձագործ	12	10
վարորդ	81	69
եռակցող	29	25
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	76	38
բանվորական այլ մասնագիտություններ	240	150
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	152	98

**Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների<sup>1</sup>, 2004թ.**

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զգբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով	
		մարդ	%
		նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	691	212	109.3
Փետրվար	621	238	127.3
Մարտ	661	224	117.9
Ապրիլ	701	210	143.8
Մայիս	664	220	131.7
Հունիս	701	208	112.4
Հուլիս	662	219	115.3
Օգոստոս	661	218	104.3
Սեպտեմբեր	626	228	112.9
Հոկտեմբեր	595	238	103.9
Նոյեմբեր	560	250	106.8

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

**Գործազրկության նպաստի և դրամական օգնության միջին չափն ըստ 2004թ. ամիսների<sup>1</sup>**

*(ամսվա վերջի դրությամբ)*

	Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ	Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ	Դրամական օգնություն ստացողների թվաքանակը, հազ. մարդ	Դրամական օգնության միջին չափը, դրամ
Հունվար	5.4	3503	8.0	1507
Փետրվար	5.9	3154	7.7	1427
Մարտ	6.2	3267	10.1	1409
Ապրիլ	6.2	3236	12.4	1427
Մայիս	6.1	3276	12.1	1440
Հունիս	5.9	3351	14.6	1464
Հուլիս	5.7	3479	15.0	1499
Օգոստոս	5.4	3524	12.4	1508
Սեպտեմբեր	5.0	3545	9.8	1523
Հոկտեմբեր	4.5	3599	7.7	1469
Նոյեմբեր	4.1	3459	6.7	2279

**Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ըստ ամիսների<sup>1</sup>**

*(ամսվա միջինը, գնահատական)*

	Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, %	
	2003թ.	2004թ.
Հունվար	10.4	9.8
Փետրվար	10.4	9.8
Մարտ	10.5	9.8
Ապրիլ	10.2	9.5
Մայիս	10.2	9.4
Հունիս	10.1	9.3
Հուլիս	10.0	9.2
Օգոստոս	9.9	9.1
Սեպտեմբեր	9.8	9.1
Հոկտեմբեր	10.3	9.2
Նոյեմբեր	10.2	9.1

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով: